որպիսին միայն կարող է համապատասխանել Ռուսաստանի պէս բազմալեզու մի երկրի և նպաստել պետութեան բոլոր տարբեր մասերի տնտեսական ու մշակութային զարգացմանը։

Անդրկովկասը պէտք է կապուած լինի Ռուսաստանի հետ դաշնակցական կերպով։ Ինքը Անդրկովկասը պէտք է ներկայացնի մի ամկամար դաշնակցական հանրապետութիւն՝ բաժանուած կանտոնների՝ տեղագրական ու մշակութային պայմանների համաձայն։

Գիւղացիական Համագումարը գտնում է, որ մինչև Սահմ. Ժողով՝ կենտր. կառավարութիւնը և նրա կովկասեան ներկայացուցիչները պարտաւոր են.

Նախապատրաստել Սահմ. Ժողովի գործը, նոր նահանգական ու գաւառական բաժանումներ մտցնել Անդրկովկասում, այնպէս, որ նրանք համապատասխանեն աշխարհագրական և տնտեսական պայմաններին և հաւասար ու արդար պայմանների մէջ դնեն բոլոր ազգերին։

Անմիջապէս մտցնել տեղական լեզուները բոլոր վարչական և դատական հիմնարկութիւնների մէջ, որի համար անհրաժեշտ է փոխել պաշտօնեաների կազմը։

Սեպտեմբերից բոլոր ստորին դպրոցները կատարելապէս ազգայնացնել, միջնակարգ դպրոցները՝ նոյնպէս։ Որտեղ այդ հնարաւոր չի լինի ամբողջովին, ազգայնացնել գէթ ստորին դասարանները։

Նոր վարչական բաժանումները մտցնելուց յետոյ, տալ երկրին զէմստւային ինքնավարութիւն և երդւեալների դատարան։

Այս գործը թեթևացնելու համար նահանգի գիւղացիների համագումարը սրտագին կոչ է ուղղում Ռուսաստանում ցրւած բոլոր կովկասցի ինտելլիգենտ հայրենակիցներին՝ վերադառնալ հայրենիք և հեշտացնել դպրոցների ու այլ հիմնարկութիւնների ազգայնացման գործը»։

Նոյն այդ տրամադրութիւնները տեսնում ենք և քաղաքային ինքնավարութիւնների, ապա և Սահմանադիր Ժողովի ընտրութիւնների ժամանակ։ Այս վերջինի արդիւնքը խիստ բնորոշ է Անդրկովկասի քաղաքական ուժերի դասաւորութեան տեսակէտից։

Սահմանադիր Ժողովի ընտրութիւններին իրար հետ մրցող ու պայքարող կողմերն էին սոցիալ-դեմոկրատները (№ 1), որոնք դեռ գործում էին համառուսական կուսակցութեան անունով և բացի Վրաստանի քւէներից ստացան նաև հայ, ռուս, թուրք և այլ քւէներ, ինչպէս նաև զօրամասերի սոց.-դեմոկրատ զինւորների ու սպաների ձայները, Մուսաւաթն ու թուրք անկուսակցական խմբակը (№ 10), որ ներկայացնում էր մահմեդական ազգայնական խաւերը, և Հ. Յ. Դաշնակցութիւնը (№ 4)։ Ընտրութեան հետևանքը եղաւ հետևեալը. սոցիալ-դեմոկրատները ստացան 661,934 քւէ և ունին 12 պատգամաւոր, մուսաւաթականները՝ 615,816 քւէ — 10 պատգամաւոր և Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ 558,400 քւէ — 9 պատգամաւոր։ 62,044 քւէն տալիս էր մէկ պատգամաւոր։ Հ. Յ. Դաշնակցութեան ցանկով ընտրուած պատգամաւորներն էին՝ Ռոստոմ Զօրեան, Մ. Յովհաննիսեան, Հ. Օհանջանեան, Յ. Զաւրեան, Կ. Համբարձումեան, Աւ. Շահխաթունեան, Յ. Քաջազնունի, Սիր. Տիգրանեան, Կ. Ղազարեան։ Այսպիսով, առանց չափազանցութեան, Անդրկովկասի հայ ժողովրդի աւելի քան 95% իր քւէն տւեց, հետևաբար և վստահութիւն յայտնեց Հ. Յ. Դաշնակցութեան։